**2022-2023 ՈՒՍՏԱՐԻ**
**ՆԱԽՆԱԿԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳ ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՐԿԱՅԻ ՕԼԻՄՊԻԱԴԱՅԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՓՈՒԼԻ ԹԵՍՏԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ**

**8 - ՐԴ ԴԱՍԱՐԱՆ**

Տևողությունը՝ 120 րոպե:
Գնահատումը կատարվում է 20 միավորանոց համակարգով:
Բոլոր առաջադրանքներն ունեն մեկ ճիշտ պատասխան:
Ճիշտ պատասխանը գնահատվում է 1(մեկ) միավոր:

**1. Քանի՞սն են ՀՀ զինված ուժերի կանոնագրքերը:**
1) 2 2) 3 3)4 4) 6

**2. Որքա՞ն է ԿԱ-74 ավտոմատի քաշը լիցքավորված փամփշտատուփով:**
1) 1.2 կգ 2) 3.6 կգ 3) 3.2 կգ 4) 4.2 կգ

**3.Որո՞նք են մարտի տեսակները:**
1) Հարձակում և քողարկում
2) Պաշտպանություն և քողարկում
3) Հարձակում և պաշտպանություն
4) Պաշտպանություն և հետապնդում

**4. Որքա՞ն է կանոնավոր քայլի արագությունը մեկ րոպեում**
1) 85-90 2) 60-70 3) 90-85 4) 110-120

**5.Թվարկվածներից ո՞րը հայ զինվորականության վարքականոնի դրույթներից չէ:**
1) հավատարմություն և անձնուրաց ծառայություն հայոց աշխարհին և թագավորությանը
2) զինվորականի պատվի և քաջի անվան անվերապահ պահպանում նույնիսկ կյանքի գնով
3) նվիրվածություն ընտանիքին
4) նվիրվածություն բանակին

**6. Ո՞ր պատմիչն է, սպարապետ Մանվել Մամիկոնյանի օրինակով, առանձնացրել հայ զինվորականության վարքականոնները:**
1) Մովսես Խորենացին
2) Փավստոս Բուզանդը
3) Եղիշեն
4) Ագաթանգեղոսը

**7. Ո՞րն է համարվում ՀՀ զինված ուժերի հիմքը**
1) Սահմանապահ զորքերը
2) ՀՀ Ազգային բանակը
3) Աշխարհազորը
4) Կամավորական ջոկատները

**8. Որքա՞ն է դասակի կազմում ջոկերի միջև հեռավորությունը**
1) Մինչև 50 մ 2) Մինչև 40 մ 3) Մինչև 60 մ 4) Մինչև 70 մ

9. Ե՞րբ է հաստատվել Հայաստանի 3-րդ Հանրապետության զինանշանը
1) 1992թ. սեպտեմբերի 21
2) 1992թ. օգոստոսի 23
3) 1991թ. դեկտեմբերի 27
4) 1991թ. օգոստոսի 23

10. Ո՞վ է շնորհում կրտսեր սպայական կազմի կոչումները:
1) ՀՀ պաշտպանության նախարարը
2) ՀՀ նախագահը
3) ՀՀ վարչապետը
4) Զորամասի հրամանատարը

11. Քանի՞ ջոկն է համարվում մեկ դասակ.
1) 3
2) 4
3) 2
4) 5

12. Տարբերանշանում զինվորական Ո՞ր կոչումն է:



1) Սերժանտ
2) Եֆրեյտոր
3) Ավագ
4) Ենթասպա

13. Ի՞նչ շքանաշան է տրվում «ՀՀ Ազգային հերոսի կոչում» ստացած անձանց:
1) Ոսկե Արծիվ շքանշան
2) Հայրենիք շքանշան
3) Ոսկե խաչ շքանշան
4) Արիության շքանշան

14.Որքա՞ն զնդակ կարող է արձակել մոտոհրաձգային ջոկը 1 րոպեում:
1) 2000 զնդակ
2) 1000 զնդակ
3) 800 զնդակ
4) 3000 զնդակ

15. Որքա՞ն է զինվորների միջև հեռավորությունը մարտակարգ կազմելիս:
1) 6-7 մ (8-12 քայլ)
2) 7-8 մ (9-13 քայլ)
3) 5-6 մ (6-11 քայլ)
4) 6-8 մ (8-12 քայլ)

16. Ո՞ր աշխատությունում է առաջին անգամ առաջարկվել ՀՀ խորհրդանիշ հանդիսացող եռագույն դրոշը՝ կարմիր, կապույտ և նարնջագույն տարբերակով:
1) Սմբատ Գունդստաբլի «Դատաստանագրք»-ում
2) Մովսես Բաղրամյանի «Նոր տետրակ, որ կոչի հորդորակ»-ում
3) Շահամիր Շահամիրյանի սահմանադրության նախագծում
4) Մխիթար Գոշի «Դատաստանագրք»-ում

17. Ջոկի մարտակարգում որտե՞ղ է զնդացրորդի տեղը:
1) Նռնականետորդի կողքին
2) Հակառակորդի թիկունքում
3) Հրամանատարի կողքին
4) Գնդացրորդի կողքին

18.Պաշտպանությունում քանի՞ մետր ճակատ է զբաղեցնում ջոկը:
1) 110
2) 90
3) 105
4) 100

19. Մոտոհրաձգային ջոկի կազմում որքա՞ն մարդ կարող էինել:
1) 10-12
2) 8-10
3) 8-9
4) 9-10

20. Դիտարկման հարմարավետության համար տեղանքի տվյալ հատվածը ի՞նչ գոտիների է բաժանվում:
1) Մոտ և հեռու
2) Բարձր, միջին ցածր
3) Առջևի և ետևի
4) Մոտակա, միջին, հեռավոր: